



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 15 ՄԱՅԻՍ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն կրօնիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 33

ՆԵՐԲՈՂ ՏԻՐՈՋ՝ ՄԵՐ ԱՐԱՐԻՉԻՆ

Ով արդարներ, Տիրոջնով ցնձացէք.
 ուղիղ վարքով ապրողներուն կը վայելէ օրհնութիւն երգել:
 Քնարով գոհութիւն յայտնեցէք Տիրոջ, փասնալար փառիղով ներքող երգեցէք անոր:
 Նոր երգ երգեցէք Տիրոջ, քաղցրօրէն, ցնձալից հնչեցուցէք ձեր նուագարանները:
 Որովհետեւ Տիրոջ խօսքը անդառնալի է, անոր բոլոր գործերը վստահելի են:
 Անիկա արդարութիւնն ու իրաւունքը կը սիրէ, աշխարհը Տիրոջ սիրովը լեցուն է:
 Տիրոջ խօսքով սրեղծուեցաւ երկինքը, անոր շունչով սրեղծուեցան երկնային բոլոր մարմինները:
 Բոլոր ծովերը կը մէկտեղէ աւազանի պէս, ովկիանոսները ջրամբարներու պէս:
 Ամբողջ աշխարհը թող Տիրոջմէ վախնայ, թող աշխարհի բնակիչները պարկաշին անկէ:
 Որովհետեւ ան ըսաւ՝ ու աշխարհը գոյացաւ, հրամայեց՝ եւ անիկա հաստատուեցաւ:
 Տէրը կը խափանէ ազգերուն խորհուրդները, ձախողութեան կը մարնէ ժողովուրդներուն ծրագիրները.
 մինչդէռ Տիրոջ խորհուրդը բոլոր ժամանակներուն համար է,
 անոր ծրագիրները՝ բոլոր սերունդներուն համար:
 Երանի այն ազգին, որուն Աստուածը Տէրը ինքն է.
 այն ժողովուրդին, որ Տիրոջ կողմէ կ'ընտրուի՝ որպէս իր սեփական ժողովուրդը:
 Տէրը երկինքէն կը նայի եւ կը փնտնէ համայն մարդկութիւնը.
 իր բնակութեան վայրէն կը դիտէ աշխարհի բոլոր բնակիչները:
 Ինք՝ որ անոնց բոլորին բանականութիւնն փրուողն է, կը հասկնայ անոնց ամէն մէկ արարքը:
 Թագաւոր մը իր գօրքին մեծութեամբ չէ որ կը փրկուի,
 պարերագմիկը իր ոյժին մեծութեամբը չէ որ կ'ազարի:
 Մարդուս կեանքը փրկելու համար ձիուն ապաւինիլը ինքնախաբէութիւնն է.
 ինչքան ալ ուժեղ ըլլայ անիկա՝ չի կրնար փրկել ձիաւորը:
 Սակայն Տէրը կը հսկէ իրմէ ակնածողներուն վրայ, որոնք անոր հոգաբարութեան կը վստահին.
 զանոնք մահուրնէ կը փրկէ, եւ կենդանի կը պահէ սովի ժամանակ:
 Մենք Տիրոջմէ կը սպասենք մեր օգնութիւնը, ան է մեր օգնականն ու պաշտպանը:
 Իրմով կ'ուրախանայ մեր սիրտը, որովհետեւ իր սուրբ անունին վստահած ենք:
 Տէր, քու հոգաբարութիւնդ թող անպակաս ըլլայ մեր վրայէն, մենք մեր յոյսը քեզի կապած ենք:

ՇՐՄԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց աղքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՍԱՂՄՈՍ 33

ՆԵՐՔՈՂ ՏԻՐՈՋ՝ ՄԵՐ ԱՐԱՐԻՉԻՆ

Քանի մը մասերէ բաղկացած այս Սաղմոսը մեզի կը ներկայացնէ հետեւեալ կէտերը:

1-3 հմր

1. Տիրոջմով ցնծալու եւ ուրախանալու:
2. Աստուծոյ ներքող երգելու, շնորհակալութիւն յայտնելու:
3. Նոր երգ երգելու, փրկութեան երգ:
4. Արդարները կրնան երգել այդ նոր երգը: Ո՛վքեր են այդ արդարները, ուղիղ վարքով ապրող մարդիկը, որոնք Աստուծոմով արդարացած են:

4-9 հմր, Ինչո՞ւ Անոր ներքող երգել

1. Որովհետեւ Անոր խօսքը անդառնալի է, եթէ խոսքացաւ, ուրմեն կը կատարէ: Անիկա մարդ չէ որ գոջայ: Կարելի է Անոր վստահիլ, որովհետեւ Անոր գործերը վստահելի են:
2. Անիկա արդարութիւնը եւ իրաւունքը կը սիրէ: Անոր սիրովը լեցուն է ամբողջ աշխարհը: Այսինքն՝ ինչ որ կը փեսնենք այդ բոլորը Աստուծոյ սիրոյն արքայայտութիւնն են:
3. Մտեղծագործութիւնը Աստուծոյ սիրոյն արքայայտութիւնն է, եւ այդ բոլորը գոյացան Իր իսկ խօսքովն ու շունչովը:
4. Ուրեմն, մարդը ուրիշ բան չունի ընելիք այլ միայն Աստուծոյ նկատմամբ ակնածանք, պատկառանք, յարգանք ունենայ, ու մանաւանդ՝ Անոր փեղը ու դերը իմանայ իր կեանքին մէջ:

10-12 հմր, Աստուած իբրեւ արարիչը համայն աշխարհին, ուրեմն Ինք Տէրն է: Իբրեւ այդպիսին.

1. Տէրը կը խափանէ ու պիտի խափանէ ազգերուն խորհուրդներն ու ծրագիրները: Որքան ալ անոնք ծրագրեն, եթէ Աստուծոյ կամքին համաձայն չէ, ուրեմն պիտի խափանէ, իսկ եթէ Իր կամքին համաձայն է, զայն պիտի օգտագործէ, Իր փրկութեան ծրագիրին համար:
2. Իսկ երանի այն ազգին, որուն Աստուածը Տէրն է, եւ Տիրոջ կողմէ ընտրուած է այդ ազգը Իրեն իբրեւ սեփական ժողովուրդ: Որովհետեւ երբ այդ ժողովուրդը Աստուծոյ կողմէ ընտրուած է, ու Աստուծոյ կը պատկանի, ուրեմն՝ Աստուծոյ պաշտպանութիւնը կը վայելէ:

13-15 հմր, Աստուծոյ ամենապետութիւնը, ամենագիտութիւնը: Ամէն ինչ փեսնելու, ամէն ինչ գիտնալու, եւ ամենուն խորհուրդները իմանալու, որովհետեւ Ինք փուած է այդ բանականութիւնը:

16-17 հմր, գգուշացում, ի՞նչ բանի վստահելու: Չվստահելու այն բաներուն, որոնք չեն կրնար փրկել, ոչ թագաւորը, ոչ ալ պատերազմի գացող զինուորը: Ոչ գօրքին մեծութիւնը, ոչ ալ ձիաւորներուն շարութիւնը: Այսօր ալ ազգեր, իրենց ուժը իրենց ունեցած բանակով կը չափեն: Իրենց ունեցած զէնք, զինամթերքով կ'արժեւորեն: Տարուան մէջ յապուկ օրեր կան, երբ փեղի կ'ունենայ փողանց, յապուկ արարողութիւն, ուժի ցուցադրութիւն: Մարդկային արժեշտով, չափանիշով, այդ է: Բայց պահ մը հարց փանք, անցող բոլոր ժամանակահատուածի պետութիւնները, որոնք ինչ զէնք ու զինամթերք, ձիեր ու ձիաւորներ ունէին, այսօր չկան: Որովհետեւ մարդու փրկութիւնը անոնցմէ կախեալ չէ:

18-19 հմր, Աստուած է, որ կը փրկէ մարդս, Ինք է որ կը պահէ Իրմէ ակնածողներուն կեանքը, նոյնիսկ՝ մահուրնէ: Այսպէղ մահուրնէ ակնարկութիւնը առաջին հերթին հոգեւոր մահէն, ի պահանջել յարկին նոյնիսկ մարմնաւոր, եթէ Իր կամքն է որ փակաւին ապրինք, ուրեմն կրնայ նստել այդ մէկն ալ ընել:

20-22 հմր, խոսքովանութիւն ու վստահութիւն: Տիրոջմէ սպասելու մեր օգնութիւնը: Իրմով կ'ուրախանայ մեր սիրտը: Որովհետեւ Իր անունին վստահած ենք: Անուն մը, որմէ բոլորն ալ կը սարսափին ու պիտի սարսափին: Անուն մը, որուն բոլորն ալ ծունկի պիտի գան, երկնայինները, երկրայինները եւ սանդարամեփականները, պիտի ըսէ Պօղոս Առաքեալ: Ի վերջոյ, աղօթք, մաղթանք, խնդրանք. թող Տիրոջ հոգաբարութիւնը անպակաս ըլլայ մեր վրայէն: Ամէն:

Պահապան ամենայնի Քրիստոս,

*աջ թո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ թո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*